Ամենայն Հայոց Կաթողիկոս

ՎԱՉԳԵՆ Ա

Ս. Էջմիածին 22.05.90

Այստեղ՝ Ձեզ մոտ, Վեհափառ Տեր, ավարտվում է այն ճանապարհը, որ հանուն Զվարթնոցի սկսել էի 1959 թ., «Գրական Թերթ»-ում տպագրված «Մի նորահայտ վկայություն» հոդվածով: Գործերիս սկիզբը լավ էր, վերջավորությունը՝ խանգարված: Եվ ահա վերջին փորձն եմ անում գեթ այստեղ գտնել արդարամտություն, մի բան, որ առօրյա կյանքում դարձել է անհնար:

Հավանաբար կասեք, որ արդեն ուշ է, մրցույթը հայտարարվել է, հետ կանգնելը դարձել անհնար: Բանն այն է, որ մրցույթի հիմք հանդիսացող նյութերը դեռ չեն բաշխվել, հետևաբար կարելի է վիճակը կարգավորել ծրագրի փոփոխման ձևով:

Հայտնի է, որ հայերը իրենց բոլոր բնակավայրերում ցանկանում են ունենալ եկեղեցի, եթե մինչ այդ եղածները չեն պահպանվել: Եկեղեցի ունենալ ցանկացող համայնքների՝ գյուղերի և քաղաքների թիվը երևի կհաշվվի ոչ թե տասնյակներով, այլ հարյուրներով: Նրանց նախագծերով ապահովելու գործը չի նախապատրաստված: Առանձին անհատների նախաձեռնությամբ արվածը կնմանվի այն տխուր երևույթին, ինչպիսին տեղի ունեցավ աղբյուր-հուշարձանների գործում – եթե մի քանիսը հաջողված, ապա մեծ թիվ են կազմում ոչ մասնագիտորեն արված գործերը:

Մի ժամանակ հանրապետական, նաև համամիութենական մրցույթներ էին հայտարարվում ակումբների և կուլտուրայի տների համար, սակայն տարբեր տարողություններով, ասենք՝ դահլիճի 800, 500, 200, 100 տեղերով: Այժմ եկեղեցիների նախագծերի այդպիսի մրցույթներ կազմակերպելու ժամանակն է: Իհարկե, չի կարելի ամենուրեք նույն տիպային նախագծերով կառուցել, այս նշանակում է մրցույթի վերջում կընտրվեն ոչ թե մեկ, երկու, երեք, այլ 10, 20, 30 նախագծեր, և ամեն կոնկրետ դեպքում կգործադրվեն դրանց տարբերակները:

Մտահոգումս այն է, որ հայտարարված, բայց գործնականում դեռ չհանձնարարված մրցույթի բնույթը կարելի է այսպիսին դարձնել։ Առայժմ ոչ ոք իրավասու չի լինի բողոք կամ պահանջ ներակայացնել։

Արդ կոնկրետ Զվարթնոցի մասին։ Զվարթնոցի ճարտարապետությամբ եկեղեցի կառուցելու անցյալ տարվա Ձեր առաջարկը փաստորեն խափանվեց ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր եկեղեցու գործերի խորհրդի նախագահ ընկ. Ս. Վարդանյանի կողմից, Բուլղարիայից վերադառնալուց անմիջապես հետո, երբ նա անսահման հիացած այնտեղ տեսածով, որոշել էր կառուցել եկեղեցի 7000 նստատեղով, դրա հիման վրա էլ հրաժարվեց Ձեր, և Ձեր ճարտարապետական բաժնի հավանությանն արժանացած Զվարթնոցի վերականգնման նախագծից (համաձայն Թորոս Թորամանյանի վերակազմության)։

7000-ը գնալով իջավ 1500-ի, բայց ձեր նախկին որոշումը չվերականգնվեց, անկախ նրանից, որ Զվարթնոցի տարողությունը դրանից մեծ է։ Այս հարցով զբաղվել է Հոգևոր խորհուրդը, համաձայնելով մրցույթով ժամանակակից ոճով նախագիծ ստանալու համար։ Պետք է, սակայն, համաձայնել, որ եթե որևէ երկ համարվում է գլուխգործոց, այն էլ ոչ միայն սեփական-ազգային արվեստի անդաստանում, որպիսին է անտարակույս Զվարթնոցը, ապա նա մնում է ժամանակակից բոլոր ժամանակների համար։ Երբեմն այդպիսիք առավել ժամանակակից են, քան նոր ժամանակներում ստեղծվողները։ Իսկ Զվարթնոցի պես համընդհանուր ճանաչման արժանացածները հաճախ չեն ստեղծվում։

Հարցերի հարցն այն է, որ տվյալ առիթով Զվարթնոցին նոր կյանք տալը խափանվելով, այլևս այն թողնում ենք հավերժորեն, այսինքն՝ այն չունենք։ Մինչդեռ ժողովուրդն այն ունեցել է, աստվածային տքնանքով ստեղծել, ինչու նրան զրկել իր ունեցածից, որի շնորհիվ իրավամբ նա պիտի կանգնի մեծերի շարքում, որպես հավասարի։

Արդ ինչու է այս այսպես ստացվում։ Ըստ երևույթին այսպես ցանկացողները անկեղծորեն հավատում են իրենց արդարացիությանը։ Սկսենք

ընկ. Ս. Վարդանյանից. թվում է, թե նա լավ տեղյակ չի եղել Զվարթնոցի արժեքին ու նշանակությանը, առավելությունը սխալմամբ տալով այլ տեղերում իր տեսածներին։ Գուցե նա համոզված է եղել իրեն ծանոթ, թերևս մոտ կանգնած ճարտարապետների ուժին, նոր, առավել լավ գործ ստեղծելու համար։ Այդպիսիները, եթե կան, թող իրենց ուժերը փորձեն այլ եկեղեցիների նախագծման մեջ, բայց ոչ Զվարթնոցի հաշվին, թերևս բարոյականությունն այդ դեպքում ավելի շահեր։

Ահավասիկ արվեստագետ Գրիգոր Խանջյանը, որ ինքն, անձամբ մասնակցել է Զվարթնոցի նախագծի քննարկմանը Մայր եկեղեցու ճարտարապետական բաժնում, տվել համաձայնություն, նշել սպասարկող անձնակազմի համար լրացուցիչ հարմարություններ ստեղծելու անհրաժեշտությունը, որը և ի կատար է ածվել։ Հետագայում մտածել է, որ գուցե թե մեր ժամանակակից որոշ ճարտարապետներ ավելի լավ գործեր ստեղծեն և այդ նոր գործերում կլինեն ազատ պատերի մեծ հարթություններ որմնանկարների համար, որ դեմ չէր լինի անձամբ իրագործել։

Ինչպես տեսնում ենք, բոլորը բարին են ցանկացել՝ հասնել առավելին, բայց գլխավորը մոռացվել և արդյունքը աննկատելիորեն ստացվել է ոչ այնպես, ինչպես այդ հավանաբար կաներ իրոք հայրենանվեր հայրենասերը։

Ով-ով, բայց ազնվաբարո Հոգևոր խորհուրդը պետք է նկատեր, որ Զվարթնոցի վերականգնման միակ և բացառիկ հնարավորությունը ձեռքից բաց է թողնվում։ Դա աննախադեպ ճգնաժամ է, հավերժական նախատինքով պարուրվելու ենթակա մի դեպք, որ միշտ կարծարծվի և կարձանագրվի։

Եվ վերջապես, եթե եկեղեցին կառուցվելու է ժողովրդի և հավատացյալների համար, ապա ինչու նրանց կարծիքը մատնվում է անուշադրության։ Այդ կարծիքը արտահայտվել է մամուլով (տես «Գրական թերթ»-ում – 06. 10. 1989 թ. և «Հայրենիքի ձայնում»-ում – 12. 05. 1990 թ. տպագրված հոդվածները), եթե անհրաժեշտ կհամարվի այդ կարծիքը ներկայացնել արձանագրություններով, ապա հնարավոր է մեկ օրվա ընթացքում հավաքել

100000 ստորագրություն (որևէ միտինգից հետո, այդպես էլ ինձ առաջարկվել էր անել, սակայն այդ անելուց մնացել եմ ձեռնպահ)։

Հետաքրքիր է, որ «Գրական թերթի» խմբագրի «կլոր սեղան» կազմակերպելու առաջարկից ընկ. Ս. Վարդանյանը հրաժարվել է. նա նույնիսկ չի փորձել իր գործողությունները արդարացնել մամուլով կամ մի այլ ձևով։

Ես, որ այժմ խախտված չեմ և տրամաբանությունս օրինականության սահմաններում է, որքան էլ ջանում, չեմ կարողանում արդարացնել Զվարթնոցի հետ կապված վերջին որոշումները։ Պատկերացնել չեմ կարողանում, որ հնարավոր է նման որոշման հանգել, դա անհնար է, լինելու բան չէ։ Ոչ մի հանգամանք այսօր չի կարող որոշիչ լինել արդարացնելու առկա որոշումը։

Նոր եկեղեցի, այն էլ մայրաքաղաքում կառուցելը, արժանավորապես նշելի է, ուրախալի, բայց երևույթի պատմական արժեքը այն չէ և երբևե չի կարող համեմատվել շուրջ 13 հարյուրամյակներ հոլովվող մի երևույթի տրամաբանական ավարտի հետ, որպիսին Զվարնթոցի կանգուն տեսնելն է։

Ինչու կտրել հիշվելիք այն թելը, որ կապում է հայ իրականության մեծ ցնցումներով լի ժամանակների ազգային անբասիր գործիչ, դեռևս 7-րդ դարում Զվարթնոցի կառուցող, Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Գ շինողին, ճակատագրական ժամանակների Հայոց իշխանաց-իշխան, ժողովրդին խաղաղությամբ պահպանող, Զվարթնոցի կրկնօրինակ ս. Գրիգորը Անիում կառուցող թագավոր Գագիկ Ա-ին և առավել խառն մեր այս ժամանակներում, Զվարթնոցին նոր կյանք պարգևելու ցանկություն ունեցող, ժողովուրդների խաղաղ գոյակցության ջատագով, մեծ հայրապետ, ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հետ։

Ով տեր, մեծափառ հայրապետ, ներող եղեք, որ ինչ որ չափով վրդովում եմ Ձեր լույս հոգու խաղաղությունը, խնդրելով մեկ անգամ ևս անդրադառնալ, առաջին հայացքից արդեն լուծում ստացած հարցին, և հանուն ճշմարտի ու բարու և օրինությամբ բարձյալ և գոհությամբ հավատացյալների, փրկենք մեր ազգային հանճարի կոթողը կորուստից։ Շահենք այնքան ճակատագրական այն երկու տարին, որ կորցնելու ենք նոր նախագծում-

ների համար։ Ի շահ ժողովրդի շահենք այն 7-10 միլիոն ռուբլին, որ պիտի ծախսվի, եթե երբեմնի պիտի ծախսվի Զվարթնոցը որպես հուշարձան վերականգնելու համար (10 միլիոնով հնարավոր է 1000 հայի բնակարանով ապահովել)։ Զվարթնոցը, որպես Երևանի գլխավոր եկեղեցի կառուցելու դեպքում, նրա նոր վերականգնման կարիք չի լինի։

Խոնարհաբար, Ձեր իմաստության նկատմամբ հավատավոր, հայ ճարտարապետ

[Տիրան Մարության]